

15 Մինչ դեռ եւս զգինուորական ձեւն յինքեան բերեր, եւ զարդարեալ էր գեղեցիկ պատմութեանաւ եւ զարդ վայելուչ, եւ ցանկալի գեղով իւրով, երկայն հասակաւ, եւ չքնադատես հերաւք վարսից իւրոց, կայր ի սպասու թագաւորին մաւտ ի սնարս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու Նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ Ներսէս լիցի մեր հովիւ: 16 Չոր իբրեւ լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամեր չառնոյր յանձն: 17 Իսկ յորժամ տեսանոյր¹ զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի թագաւորին. ասէին, Ոչ ոք լիցի մեր հովիւ՝ բայց ի դմանէ, եւ ոչ ոք Նստի այլ յայնմ աթոռ՝ բայց դա: 18 Իսկ Նա իբրեւ զանձնն չկամեր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում, ապա ի մեջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խաւսել զանձնէ իւրմէ զանաւրենութիւնս եւ զբամբասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ:

19 Չոր իբրեւ լուան բազմութիւնքն, գիտացեալ զստելն Նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ թագաւորաւն թալացեալ էին ի ծաղուէ: 20 Իսկ զաւրքն աղաղակէին առ հասարակ. Ի մեզ եւ ի զլուխ մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցերն. ի վերայ անձանց մերոց եւ ի վերայ որդւոց մերոց լիցին գործքն. բայց դու զգործս հաւրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւնն Նորոգեա մեզ: 21 Իսկ Նա իբրեւ այլ ինչ ոչ եգիտ տալ Նոցա բանիցն պատասխանի, զի թշնամանս լինէր զաւրացն, եւ ասէր. Անաւրէնք էք եւ պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, եւ ոչ զձեր մեղսդ ընդ անձամբ առնուլ. ապա ոչ կարեմ աչառել, եւ ոչ ձերում չարութեանդ համբերել: 22 Եւ այսաւր տարապարտուց սիրեք դուք զիս տարապարտ, եւ վաղիւ ատելի եւ թշնամի եւ թակն զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապէք զիս. այլ թո՛յլ տուք ինձ, անհոգութեամբ ըստ իմում չափուս անարժանութեամբ զկեանս իմ տառապանաւք եւ մեղաւք, հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունելով, անցուցանել թերեւս կարացից: 23 Ապա զբողոք բառնային բազմութիւնք զաւրացն, եւ ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լիցիս մեզ հովիւ. զի այնչափ պնդեալ մարդկանն, յԱստուծոյ տեսչութենէն լինէր այնպէս: 24 Առ սրտին զազանութեանն եւ յոյժ ցասմանն թագաւորն Արշակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր Նմա Ներսէսն բարձեալ ունէր ի սպասու թագաւորին ըստ աւրինաց սենեկապետութեանն, ի բաց հանէր ի Նմանէ: 25 Եւ հրամայէր զՆա կապել զիւրով առաջեւ. զհերսն² զանգրագեղս զվայելուչ թագագանգուր վարսիցն, զի ուրեք երբեք Նման Նմա ոչ գտանէր, զայն ի բաց խզեալ հրամայէր.

1 Օրինակ մի՝ տեսանէր

2 Օրինակ մի՝ առաջ, եւ զհերսն